

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը Ծաղկաձորում հանդիպում ունեցավ ՀՀԿ Վայոց ձորի երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ

21.07.2014



2014 թվականի հուլիսի 19-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ, ՀՀԿ խորհրդի անդամ Էդգար Ղազարյանը Ծաղկաձորում հանդիպում ունեցավ ՀՀԿ Վայոց ձորի երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք ՀՀԿ երիտասարդական կազմակերպության նախաձեռնությամբ և աջակցությամբ իրենց եռօրյա հանգիստն էին անցկացնում Ծաղկաձորում: Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ԱԺ պատգամավոր, ՀՀԿ գործադիր մարմնի անդամ, ՀՀԿ երիտասարդական կազմակերպության ղեկավար Կարեն Ավագյանը և ՀՀԿ երիտասարդական կազմակերպության մարզային կառույցների գործունեության համակարգող, ՀՀԿ խորհրդի անդամ Հովհաննես Գաբրիելյանը: Հանդիման ընթացքում Է.Ղազարյանը ներկայացրեց երիտասարդության բնագավառում մարզպետարանի կողմից իրականացվող ծրագրերը, ինչպես նաև մարզպետին կից երիտասարդական խորհրդի գործունեության հիմնական ուղղությունները: Մարզպետը ներկայացրեց նաև մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղությամբ իրականացվող ծրագրերը և առաջարկեց երիտասարդ հանրապետականներին առավել ակտիվ դերակատարում ունենալ իրենց համայնքային կյանքում, սեփական նախաձեռնություններով և ծրագրերով մասնակցություն ցուցաբերել ոչ միայն երիտասարդական, այլև հասարակական կյանքին ընդհանրապես: Կարեն Ավագյանի կողմից առանձնահատուկ կարևորություն տրվեց ՀՀԿ երիտասարդական կազմակերպություններում տարբեր հանձնաժողովների ստեղծման անհրաժեշտությանը, որտեղ երիտասարդները կարող են առավել արդյունավետ գործունեություն ծավալել ըստ իրենց մասնագիտական ունակությունների և նախասիրությունների: Կարևորվեց նաև ՀՀԿ բոլոր սկզբնական կազմակերպություններում, հատկապես գյուղական բնակավայրերում ՀՀԿ ակտիվ երիտասարդական կառույցների ձևավորման անհրաժեշտությունը: Հանդիպման ավարտին Է.Ղազարյանն իր պատրաստակամությունը հայտնեց համակողմանի և լիարժեք աջակցություն ցուցաբերել երիտասարդներին իրենց ծրագրերի և նախաձեռնությունների իրականացման հարցում: